Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՔՐԻՐՆԵՐԸ*

Ա Ն Կ Ա Ր Ա

			ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ				
Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
1852	2071					1331 թ. մայիսի 13	1331 թ. մայիսի 13

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Անկարայի վիլայեթում Նալլուխան կազայում գտնվող հայոց եկեղեցին հաստատված է 5 զիլգադե 1304 թվակիր կայսերական հրամանով, Քեսքին կազայի կենտրոնում՝ Դենր-Մադենում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված հայոց եկեղեցին կառուցված է 1292 թվականին։ Այս մասին տեղերից նշված լինելով, խնդրում ենք այդ մասին անհրաժեշտ կարգադրությունն անել։ Այդ մասին...

** Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № № Ա-ից, Բ—Գ—Դ-ից, Ժ-ից և 1966 թվականի Բ-ից, Գ-ից և Զ-ից։*

ԿԵՍԱՐԻԱ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սկսելու թվականը	Մաքրագրության թվականը
185 184 303	1985					1330 թ. փետրվարի 16	Նույնը

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Բուն Կեսարիայի սանջաքում և հարակից վայրերում գտնվող և կայսերական հրամանով հաստատված 15 եկեղեցիների անուններն ու կայսերական հրամանի թվականները, ինչպես նաև կայսերական հրամանով չհաստատված 33 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականներին վերաբերյալ ցուցակը երկու օրինակով սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն կանոնի, անհրաժեշտ կարգադրությունն անել։

ԿԵՍԱՐԻԱ

№ № 184, 303, 185
Ֆերմանով՝ 15։
Առանց ֆերմանի՝ 33։
Կցված է 16 փետրվար 1370 թ. Հ. 1935 թաքրիրին։

Կառուցման թ.

1. Կեսարիայի սանջաքի Դևելու կազայում Ֆենիսե գյուղում հայոց եկեղեցին, 1217 թ. ջեմազի-ուլ-էվվելի կեսին։
2. Նախապես Կեսարիայի կազային, ներկայումս Սվազի վիլայեթին ենթակա Բյունյան, այլ անունով Սարմասաքլի գյուղի թաղերից Ենիջե թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1282 թ. ռեբի-ուլ-էվվելի սկզբին։
3. Կեսարիայի Էմիր-սուլթանի թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1247 թ. ռեջեբի կեսին։
4. Կեսարիայի Սելիմ-փաշայի թաղում Ս. Եղիա (Խրտըր Իլյաս) եկեղեցին, նույն ֆերմանով։
5. Կեսարիայի Դալաս գյուղի Աշաղը թաղում Ս. Թորոս եկեղեցին, 1252 թ.։
6. Կեսարիայի Դալաս գյուղի Յուքարը թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1253 թ.։
7. Կեսարիայի Քյոփրյու-քյոյ գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1264 թ.։
8. Կեսարիայի Թոլսուն գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1250 թ. ռեբի-ուլ-էվվելի կեսին։
9. Կեսարիայի Քերմիր գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1250 թ. ռեջեբի կեսին, 1251 թ. ջարանի սկզբին (երկու ֆերման)։
10. Կեսարիայի էֆքերի գյուղից դուրս Ս. Կարապետ վանքի («վանք» հայերեն) հայոց եկեղեցին, վանքի ֆերմանը հիշված է 1142 թ. ռեբի-ուլ-էվվելի սկզբին։
11. Կեսարիայի էֆքերի գյուղում Դեմիրջիլիք թաղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1274 թ.։
12. Կեսարիայի էֆքերի գյուղում Դեմիրջիլիք թաղում Ս. Գևորգ եկեղեցին, 1274 թ.։
13. Կեսարիայի էֆքերի գյուղում Դեմիրջիլիք թաղում Ս. Սարգիս եկեղեցին, 1274 թ.։
14. Կեսարիայի էֆքերի գյուղում Դեմիրջիլիք թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1274 թ.։
15. Կեսարիայի էֆքերի գյուղում Դեմիրջիլիք թաղում Ս. Եղիա եկեղեցին, 1274 թ.։
16. Կեսարիայի Մոնջսան գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1260 թ. ռեբի-ուլ-էվվելի կեսին։
17. Կեսարիայի (Վանք) գյուղում Ս. Աստվածածին վանքի հայոց եկեղեցին, 1276 թ.։
18. Կեսարիայի Մանջսոն գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, ջեմազի-ուլ-էվվելի սկիզբը։
19. Կեսարիայի Մանջսոն գյուղում Ս. Նշան եկեղեցին, 1250 թ.։
20. Կեսարիայի Մանջսոն գյուղում Ս. Բարսեղ եկեղեցին, 1250 թ.։
21. Կեսարիայի Մանջսոն գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1250 թ.։

22. Կեսարիայի Երքելեթի գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1251 թ. ռեբի-ուլ-էվվելի սկզբին։
23. Կեսարիայի սանջաքի Դևելու կաղայի Ջոմաքլի գյուղում Ս. Թորոս, այլ անունով Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1253 թ. շաբանի կեսին։
24. Կեսարիայի Դոմարդի գյուղում Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, 1251 թ. ռեբի-ուլ-էվվելի սկիզբը։
25. Կեսարիայի (Վանք) գյուղում Ս. Աստվածածին վանքում հայոց եկեղեցին, 1264 թ. ռեբի-ուլ-էվվելի վերջին։
26. Կեսարիայի սանջաքի Դեևլու կաղայի Ջոմաքլի թաղի մասերից Աշուղի թաղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1281 թ. զիլգաղեի սկզբին։
27. Կեսարիայի Էվերեկ գյուղում Ս. Թորոս եկեղեցին (տե՛ս լրացուցիչ Արդարադատության մինիստրության գրված 1331 թ. մարտ 9-ի № 2029 թաքրիրը) 1251 թ.։
28. Կեսարիայի Ֆենիսե գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1251 թ.։
29. Կեսարիայի Ջօջուն գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1251 թ.։
30. Կեսարիայի Սեյալթր թաղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1275 թ.։
31. Կեսարիայի Յուքարը Աղլաս գյուղում Ռեխս թաղի Ս. Հակոբ եկեղեցին, 1035 թ.։
32. Կեսարիայի Դրեվանք գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1035 թ.։
33. Կեսարիայի Քիսի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1035 թ.։
34. Կեսարիայի Նիրզե գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1035 թ.։
35. Կեսարիայի Դարստաք գյուղում Ս. Անդրեաս եկեղեցին, 1140 թ.։
36. Կեսարիայի Բալաքսի գյուղում Ս. Խաչ եկեղեցին, հնուց։
37. Կեսարիայի Բալաքսի (Վանք) գյուղում Ս. Դանիել վանքում Ս. Աստվածածին եկեղեցին, 1240 թ.։
38. Կեսարիայի Դդեվանք գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
39. Կեսարիայի Իլիբե գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1215 թ.։
40. Կեսարիայի Ինջե-սու գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1215 թ.։
41. Կեսարիայի Սեյուդլի գյուղում Ս. Փրկիչ եկեղեցին, 1300 թ.։
42. Կեսարիայի Ենիջե գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1292 թ.։
43. Կեսարիայի Յադդի Բարան գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1300 թ.։
44. Կեսարիայի Կյոմգի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1291 թ.։
45. Կեսարիայի Դաշխան գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1300 թ.։
46. Կեսարիայի Սազաք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1300 թ.։
47. Կեսարիայի Մոսի-Հաջիլի գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1315 թ.։
48. Կեսարիայի Կարաջա-Վիրան գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1234 թ.։

ԿԵՍԱՐԻԱՅԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՛ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գեաը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
						1330 թ. մայիսի 6	նույնը

Արդարադատության և դավանանքների մինիստրության

16 փետրվար 1330 թ. № 1985 թաքրիրին կից ցուցակում նշված էր, որ Կեսարիայի սանջաքի Էվերեկ գյուղում գտնվող Ս. Թորոս եկեղեցին կառուցված է 1251 թ. և կայսերական հրամանով հաստատված չի եղել։ Մինչդեռ ներկայումս պարզվում է, որ հիշյալ եկեղեցին հաստատված է եղել 1322 թ. սեֆերի 2-ի կայսերական հրամանով և այդ մասին արձանագրված է տեղական կառավարության կողմից։ Հետևաբար այդ եկեղեցիների համար նորից կայսերական հրամանի կարիք չի մնում։

ԻԶՄԻՐԻ ԱՑՏՐՆԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի № ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Իրավանգակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սահմանության թվականը	Մարքայության թվականը
1329	2058					1331 թ. ապրիլի 21	Նույնը

Արդարադատության և դավանանքների Մինիստրության

Այդրն վիլայեթում և նրան հարակից վայրերում գտնվող և կայսերական հրամանով հաստատված 13 եկեղեցիների անունները և կայսերական հրամանի թվականները, ինչպես նաև կայսերական հրամանով չհաստատված 10 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող երկու օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն ընդունված կարգի, անհրաժեշտ կարգադրություն անել։ Այդ մասին... (պակաս է)։

ԻԶՄԻՐ

Ֆերմանով՝ 63։
Առանց ֆերմանի՝ 10։
Կցված է 1331 թ. ապրիլի 21-ի № 2058 թաքրիրին։

Կառուցման թ.

1. Բուն Իզմիրում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1269 թ.։
2. Բուն Իզմիրում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1259 թ.։
3. Բուն Իզմիրում Ս. Հարություն եկեղեցին, 1300 թ.։
4. Իզմիրի Բորնսի նահիյեյում Ս. Խաչ եկեղեցին, 1279 թ., մուհարրեմի վերջին։
5. Իզմիրի Կարադաշ գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1289 թ., 19 զիլհիջջե։
6. Իզմիրի Կարշույակա գյուղի թաղամասում Դոնանմաջի թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1288 զիլհիջջե։
7. Այդրն վիլայեթի Կյոզթեփե գյուղում Ս. Հոգեգալուստ եկեղեցին, 1286 թ.։
8. Այդրն վիլայեթի Բայրաքլի գյուղում Ս. Թագավոր եկեղեցին, 1330 թ.։
9. Այդրն վիլայեթի Մեսխիշ (?) կազայում Ս. Սարգիս եկեղեցին, 1251 թ.։
10. Այդրն վիլայեթի Սարուխանի սանջաքում Ս. Սիոն եկեղեցին, 1248 թ.։
11. Այդրն վիլայեթի Սարուխանի սանջաքում Ցուքարի գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1292 թ. 29 մուհարրեմ։
12. Այդրն վիլայեթի Թորղուդլի, այլ անունով Կասաբայի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1255 շաբանի վերջին։
13. Այդրն վիլայեթի Աքհիսարի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1249 թ. ռեբի-ուլ-էվվելի կեսին։
14. Այդրն վիլայեթի Քըրք-Աղաջի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1280 թ. ռեբի-ուլ-էվվելի կեսին։
15. Այդրն վիլայեթի Բերգամայի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1232 թ.։
16. Այդրն վիլայեթի Բերգամայի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1261 թ. շեվվալի վերջին։
17. Այդրն վիլայեթի Բայենդեր կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1270 թ. ռեջեբի սկզբին։
18. Այդրն վիլայեթի Կուշ-Ադայի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1182 թ.։
19. Այդրն վիլայեթի Սյոքեի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1208 թ.։
20. Այդրնի սանջաքում Աջեմյան թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1249 թ. ռեբի-ուլ-էվվելի կեսին։
21. Այդրնի վիլայեթի Նաղիլլի կազայում Ս. Հռիփսիմե եկեղեցին, 1257 թ. ռեջեբի կեսին։
22. Այդրնի վիլայեթի Դենիզլի կազայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1246 թ. շաբանի վերջին։
23. Այդրնի վիլայեթի Օդեմիշի կազայում Ս. Հռիփսիմե եկեղեցին, 1219 թ. ռեջեբի վերջին։

Ի Զ Մ Ի Թ

ՀԱՑՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասեն-յակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՛ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գեսը	Սևագրու-թյան թվականը	Մաքրա-գրության թվականը
1611	2091					1330 թ. մայիսի 30	1330 թ. մարտի 30

Արդարադատության և դավանանքների

Իզմիթի սանջաքի և նրան հարակից վայրերի և կայսերական հրամանով հաստատված 14 եկեղեցիների անուններն ու կայսերական հրամանի թվականները, ինչպես նաև կայսերական հրամանով չհաստատված 36 եկեղեցիների վայրերը, անուններն ու կառուցման թվականները ցուցնող ցուցակը երկու օրինակներով սրա հետ ներկայացվում է։ Այդ մասին . . . (պակաս է)։

Ի Զ Մ Ի Թ

1641

Ֆերմանով՝ 14։
Առանց ֆերմանի՝ 36։

Ֆերմանի թ. Կառուցման թ.

1. *Բուն Իզմիթում Ս. Աստվածածին եկեղեցին, 1252 թ.։*
2. *Իզմիթի սանջաքի Բաղչեջիք նահիյեյում Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։*
3. *Իզմիթի սանջաքի Բաղչեջիք նահիյեյում Ս. Թագավոր եկեղեցին, սույն եկեղեցու նորոգման մասին 1174 թ. ռեջեբի 5-ին Բարձր Սեղարեթի հրամանագիրը տրըված լինելը արձանագրությամբ պարզվում է։*
4. *Իզմիթի սանջաքի Բաղչեջիք նահիյեյում Ս. Մինաս եկեղեցին, հնուց։*
5. *Իզմիթի սանջաքի Դյունքել գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1239 թ. ռեջեբի վերջին։*
6. *Իզմիթի սանջաքի Վերին գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։*
7. *Իզմիթի սանջաքի Մանուշակ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
8. *Իզմիթի սանջաքի Ջաֆար գյուղում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, հնուց։*
9. *Իզմիթի սանջաքի Օվեջիք գյուղում Ս. Եղիա եկեղեցին, հնուց։*
10. *Իզմիթի սանջաքի Օվեջիք գյուղում Ս. Եղիա եկեղեցին, հնուց։*
11. *Իզմիրի սանջաքի Իրսլանիք (?) գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1326 թ. 18 զիլգադեւ*
12. *Իզմիրի սանջաքի Իրոլանիք (?) գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
13. *Իզմիրի սանջաքի Ժամավիրա գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։*
14. *Իզմիրի սանջաքի Դաղ դյուղում Ս. Նշան եկեղեցին, 1256 թ.։*
15. *Իզմիրի սանջաքի Դաղ գյուղում Խնդրակատար եկեղեցին, 1256 թ.։*
16. *Իզմիթի սանջաքի Ադաբազար կաղայում Ս. Հրեշտակապետ եկեղեցին, 1275 թ. մուհարրեմի կեսին։*
17. *Իզմիթի սանջաքի Ադաբազար կաղայում Ս. Կարապետ եկեղեցին, 1249 թ. ռեբի-ուլ-էվվելի սկզբին։*
18. *Իզմիթի սանջաքի Ադաբազար կաղայում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 1246 թ. մուհարրեմի կեսին։*
19. *Իզմիթի սանջաքի Ադաբազար կաղայում Ղաղելլերի թաղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1330 թ. շաբան 16-ին։*
20. *Իզմիթի սանջաքի Ադաբազար կաղայում Ս. Եղիա եկեղեցին, 1229 թ.։*
21. *Իզմիթի սանջաքի Ադաբազար կաղայում Ս. Հարություն եկեղեցին, 1325 թ.։*
22. *Իզմիթի սանջաքի Ադաբազար կաղայում, Կաղային կից Սաբանջա նահիյեյում հայոց եկեղեցին, 1256 թ. ռեբի-ուլ ախըրի կեսին։*
23. *Իզմիթի սանջաքի Ադաբազար կաղայում Յենի-Կարիյե գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1292 թ.։*
24. *Իզմիթի սանջաքի Ֆիրիզլի կաղայում Ս. Աստվածածին եկեղեցին 1313 թ.։*
25. *Իզմիթի սանջաքի Ֆիրիզլի կաղայում Ս. Եղիա եկեղեցին։*
26. *Իզմիթի սանջաքի Դամլըք կաղայում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1281 թ. ջեմազիուլ-էվվելի սկզբին։*

27. Իզմիթի սանջաքի Դամլըք կազայում Ս. Կարապետ եկեղեցին, 651 թ.։
28. Իզմիթի սանջաքի Ֆընդըքլի կազայում Ս. Կարապետ եկեղեցին, 1256 թ.։
29. Իզմիթի սանջաքի Էլմալու կազայում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1263 թ.։
30. Իզմիթի սանջաքի Ադաբազարի կազային կից Ազրզլի նահիյեի Արամ գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1295 թ.։
31. Իզմիթի սանջաքի Ադաբազարի կազային կից Ինջիրլի նահիյեի Սուրլուք գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1325 թ.։
32. Իզմիթի սանջաքի Ադաբազարի կազային կից Ինջիրլի նահիյեյում Քեղամ գյուղում Ս. Հովհաննես եկեղեցին, 1303 թ.։
33. Իզմիթի սանջաքի Ադաբազարի կազայում Ասրամեջի (?) թաղում Ս. Գևորգ եկեղեցին, 1316 թ.։
34. Իզմիթի սանջաքի Ադաբազարի կազայում Ջիքուր թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1328 թ.։
35. Իզմիթի սանջաքի Ադաբազարի կազայում Թեփե թաղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1325 թ.։
36. Իզմիթի սանջաքի Ադաբազարի կազային կից Խենդեքի նահիյեյում Էրմենի գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1306 թ.։
37. Իզմիթի սանջաքի Ադաբազարի կազային կից Խենդեքի նահիյեյում Ջոբան գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1327 թ.։
38. Իզմիթի սանջաքի Կեյվե կազայի Օրթաքյոյ գյուղում հայոց եկեղեցին, 1294 թ. զիլգադեի 12-ին։
39. Իզմիթի սանջաքի Կեյվե կազային կից Էշմե գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1314 թ.։
40. Իզմիթի սանջաքի Կեյվե կազային կից Կուլդիլեն գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1285 թ. ռեբի-ուլ-էվվելի վերջին։
41. Իզմիթի սանջաքի Կեյվե կազային կից Կյոֆգյոզ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1299 թ.։
42. Իզմիթի սանջաքի Կեյվե կազային կից Կիխբեր (?) գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1248 թ.։
43. Իզմիթի սանջաքի Կեյվե կազային կից Աքհիսար նահիյեյում Ս. Երրորդություն եկեղեցին, 1297 թ. ռեբի-ուլ-էվվելի 27-ին։
44. Իզմիթի սանջաքի Կարա-Մյուրսել կազայում Մերդեգյոզ գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 587 թ.։
45. Իզմիթի սանջաքի Կարա-Մյուրսել կազայում Իլաքդերե գյուղում Ս. Հրեշտակապետ (?) եկեղեցին, 1258 թ.։
46. Իզմիթի սանջաքի Սա մուվե (?) կազային կից Կարսի Ս. Աստվածածին եկեղեցին, 1258 թ.։
47. Իզմիթի սանջաքի Սա մուվե կազային կից Կալի Ս. Սարգիս եկեղեցին, 1260 թ. ռեբի-ուլ-էվելի կեսին։
48. Իզմիթի սանջաքի Սա մուվե կազային կից Շակշաք գյուղում Ս. Նիկողոս եկեղեցին, 1248 թ.։
49. Իզմիթի սանջաքի Սա մուվե կազային կից Ջիկուր գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1266 թ. սեֆերի կեսին։
50. Իզմիթի սանջաքի Սա մուվե կազային կից Կանդերե կազայի Շեյխլերի նահիյեյի Ռեշադիյե գյուղում հայոց եկեղեցին, 1328 թ.։

Կրված է 1331 թ. մայիսի 20-ի № 2096 թաքրիրին։

(Շարունակելի)